

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՑՑՄԱՄԲ ԲԱԺԻՆԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՆՊՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՐՏԱՀԵՐԹ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Դատավորների թեկնածությունների ցուցակի վարչական մասնագիտացմամբ բաժնի համալրման նպատակով անցկացվող արտահերթ որակավորման ստուգումների գրավոր աշխատանքների ստուգման և գնահատման համար Հայաստանի Հանրապետության դատական դպրոցի /այսուհետ՝ Դպրոց/ կառավարման խորհուրդը կազմավորում է Ստուգման և գնահատման հանձնաժողով /այսուհետ՝ Հանձնաժողով/՝ որակավորման ստուգումն անցկացման նախորդ օրվանից ոչ ուշ:

2. Հանձնաժողովը բաղկացած է երեք դատավորից, որոնք իրենց կազմից ընտրում են նախագահողին: Հանձնաժողովի անդամը պարտավոր է Դպրոցի կառավարման խորհրդին անհապաղ գրավոր հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների մասին, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել որակավորման ստուգմանն իր մասնակցության անկողմնակալության վերաբերյալ:

3. Հանձնաժողովի աշխատանքն իրականացվում է գաղտնի և դժնփակ ընթացակարգով: Հանձնաժողովի աշխատանքային պայմանները ապահովում է Դպրոցի տնօրենը:

4. Հավակնորդների գրավոր աշխատանքները Հանձնաժողովին տրամադրվում են անանուն:

5. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ստուգում է յուրաքանչյուր հավակնորդի գրավոր աշխատանքի յուրաքանչյուր խնդիր և գնահատում այն: Հանձնաժողովի անդամի կողմից տրված գնահատականների հիման վրա հանձնաժողովը հաշվարկում է միջին թվաբանական գնահատականը:

6. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հավակնորդի գրավոր աշխատանքը ստուգելիս և գնահատելիս ղեկավարվում է հետևյալ չափանիշներով՝ հավակնորդի իրավական գիտելիքներ, վերլուծական միտք, իրավաբանական գրավոր խոսքի սահունություն, քննական խնդրի լուծում (դատական ակտի եզրափակիչ մասի տրամաբանական շաղկապվածությունը վերլուծական մասի հետ):

7. Գրավոր աշխատանքի յուրաքանչյուր խնդիր գնահատվում է 100 միավոր համակարգով:

Գրավոր աշխատանքը գնահատվում է զրո միավոր, եթե այն ներկայացվել է առանց դրոշմի թղթերի վրա, այլ գրիչով գրված, հավակնորդների անվամբ, ազգանվամբ կամ ստորագրությամբ, ինչպես նաև այլ կերպ անհատականացնող նշումներով:

8. Գրավոր աշխատանքների արդյունքները հրապարակվում են ոչ ուշ, քան որակավորման ստուգման անցկացումից հետո յոթնօրյա ժամկետում դատական համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում /www.court.am, «Նորություններ» բաժնում/:

